ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի «ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը

«ԻՄ ՔԱՅԼԸ» խմբակցությունը, Սահմանադրության 7-րդ գլխի կարգավորումներին համապատասխան հանրային վստահություն վայելող և ժողովրդավարական լեգիտիմություն ունեցող Սահմանադրական դատարան ունենալու հարցի հրատապությունը կարևորելով, 2020 թվականի փետրվարի 6-ին նախաձեռնեց Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե, որը նշանակվեց 2020 թվականի ապրիլի 5-ին: Սակայն, արտակարգ իրավիճակի հիմքով արտակարգ դրություն հայտարարելու հետևանքով հանրաքվեն չանցկացվեց:
Համաճարակի շարունակական տարածումն ակնհայտ դարձրեց այն իրողությունը, որ առաջիկա ժամանակահատվածում Հայաստանում հանրաքվե հնարավոր չի լինի անցկացնել: Ազգային ժողովը, առաջնորդվելով Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված ճգնաժամը լուծելու հրամայականով, 2020 թվականի հունիսի 22-ին ընդունեց Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, որը ուժի մեջ մտավ 2020 թվականի հունիսի 26-ին:
2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» որոշումը ուժը կորցրած չճանաչելու դեպքում «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումների համաձայն, արտակարգ դրության վերացումից անմիջապես հետո՝ եռօրյա ժամկետում, օրենքի ուժով պետք է նշանակվի 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված և չանցկացված հանրաքվեի նոր օր:
Ինչ վերաբերում է Ազգային ժողովի կողմից իր իսկ կողմից նախկինում ընդունված «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» որոշումը ուժը կորցրած ճանաչելու հնարավորությանը, ապա այն ուղղակիորեն ամրագրված է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 107.1 հոդվածում: Ավելին նման հնարավորության առկայության անհրաժեշտությունն ամրագրվել է նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական (Վենետիկի) հանձնաժողովի կողմից:[1]

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

[1] CDL-AD(2020)016, պարբ. 81 (https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2020)016-e)

2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» Ազգային ժողովի որոշմամբ հանրաքվեի դրված Սահմանադրության փոփոխությունների նախագծով առաջարկվող իրավակարգավորումը մասնակի իրացված են 2020 թվականի հունիսի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունված Սահմանադրության փոփոխություններով, որոնք 2020 թվականի հունիսի 26-ից ուժի մեջ են մտել: Ըստ այդմ, առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2020 թվականի փետրվարի 6-ի «Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին» ԱԺՕ-001-Ն որոշումը: